ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Երիտասարդների հզորացում հանուն հաջողության» ծրագիրն իրականացնում են «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ:

Ծրագիրը մեկնարկել է 2024 թվականի հուլիսից և ընդհանուր նպատակն է՝ բարելավել ՀՀ Շիրակի և Տավուշի մարզերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 17-35 տարեկն 400 երիտասարդի սոցիալ-տնտեսական վիճակը՝ զբաղունակության և ձեռներեցության ներուժի, պետական և ոչ պետական կառույցների կարողությունների զարգացման միջոցով:

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ովքեր կարող են դիմել.

«Երիտասարդների հզորացմանն ուղղված ենթադրամաշնորհային մրցույթը» նախատեսված է այն 12 ՔՀԿ-ների համար, որոնք ընտրվել և մասնակից են եղել ծրագրի շրջանակներում իրականացված կարողությունների զարգացման դասընթացներին: Սույն մրցույթի շրջանակներում կընտրվեն և կֆինանսավորվեն 4 նախագծային առաջարկներ:

Մրցույթի նպատակները և ակնկալվող արդյունքները.

Ենթադրամաշնորհային մրցույթը նպատակ ունի հնարավորություն տալու ՔՀԿ-ներին իրականացնել իրենց ռազմավարություններից բխող նախագծեր, որոնց շնորհիվ նրանք ակտիվորեն կգործածեն այն բոլոր քաղաքականությունները, ռազմավարությունները, ուղեցույցները և հմտությունները, որոնք մշակել, զարգացրել և ձեռք են բերել «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ-ի և Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն (ԵՆԿ) ՀԿ-ի կողմից իրականացված կարողությունների զարգացման դասընթացների շնորհիվ: Մասնավորապես՝

ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ զարգացում. Մրցույթը նպատակ ունի աջակցել ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ զարգացմանը՝ նրանց հնարավորություն տալով իրականացնել նախագծեր, որոնց շնորհիվ ՔՀԿ-ները կգործածեն արդեն ստեղծված ռազմավարությունները, քաղաքականությունները՝ ամրապնդելով և բարելավելով իրենց հմտությունները և նախագծեր իրականացնելու կարողությունները:

ՔՀԿ-ների կայունություն. Մրցույթը նպատակ ունի խթանել ՔՀԿ-ների ֆինանսական և ինստիտուցիոնալ կայունությանը՝ նպաստելով ոլորտում նրանց առաջխաղացմանը և զորեղացմանը:

ՔՀԿ-ների ազդեցության բարձրացում և համագործակցության խթանում. Մրցույթը նպատակ ունի հնարավորություն տալ ՔՀԿ-ներին իրականացնելու իրենց ռազմավարություններից բխող նախագծեր, որոնք իրենց հերթին կխթանեն ՔՀԿ-ների ոլորտային ազդեցությանը և նոր համագործակցությունների ստեղծմանը:

Ներկայացվող նախագծերը պետք է թիրախավորեն 17-35 տարեկան երիտասարդներին՝ ապահովելով տարբեր սոցիալական խմբերի ներգրավվածությունը: Ներկայացվող նախագծային առաջարկները կարող են լինել հետևյալ թեմաներով՝ չսահմանափակվելով դրանցով.

- երիտասարդների սոցիալ-տնտեսական ինտեգրում՝այդ թվում նաև հատուկ աջակցության կարիք ունեցող/,
- Կյանքի հմտությունների դասընթացի իրականացում,
- Երիտասարդների զորեղացում և կարողությունների զարգացում փափուկ հմտությունների տրամադրման միջոցով,
- Երիտասարդների իրավունքների ջատագովություն և պաշտպանություն,
- Երիտասարդների քաղաքացիական ներգրավվածություն,
- Տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ իրազեկում և ներգրավվածության ապահովում:

Ենթադրամաշնորհի չափը և նախագծի տևողությունը.

Ներկայացվող նախագիծը պետք է իրականացնել 6-ից 8 ամիսների ընթացքում: Նախագիծը պետք է ավարտվի մինչև 2026թ-ի դեկտեմբերի 31-ը: Ներկայացվող նախագծի բյուջեն չի կարող գերազանցել 1,050,000 ՀՀ դրամը:

Ինչպես դիմել մրցույթին.

Ենթադրամաշնորհային մրցույթին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

- Հայտադիմում (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- Բյուջե (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- Counter-terrorism declaration (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- Local Partners Assessment (excel) (համաձայն տրամադրված ձևաթղթի)
- Վերջին 2 տարվա ընթացքում իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկություն (անվանումը, նպատակը, դոնորը, բյուջեն, տևողությունը)
- Գրանցման վկայականի պատճեն
- Կանոնադրության պատճեն
- Կազմակերպության գործունեության մասին ամփոփ տեղեկատվություն (նպատակ, առաքելություն, խնդիրներ, գործունության հիմնական ուղղությունները, գործունեության հիմնական տեսակները/ ձևաչափերը, թիրախային խումբը:) Արդյոք կազմակերպությունը ներգրավված է ոլորտային աշխատանքային խմբերում, ցանցերում, խորհրդատվական մարմիններում:

Վերոնշյալ փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում հայտը չի կարող դիտարկվել: Ենթադրամաշնորհային մրցույթին դիմելու վերջնաժամկետը 2026թ-ի ապրիլի 10-ն է: Հայտադիմումն անհրաժեշտ է ուղարկել margarit.grigoryan@yic.am էլ. հասցեին: Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել նույն էլ. հասցեով, կամ զանգահարել +37433177555 հեռախոսահամարով:

ՆՇՈՒՄ

- Ձեռագիր հայտերը չեն ընդունվելու:
- Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը չեն դիտարկվելու:
- Հայտադիմումները կարող են ներկայացվել հայերեն
-Տրամադրված տեղեկատվությունը կիրառվելու է բացառապես հայտերի դիտարակման համար և ենթակա չէ տարածման:
- Եթե հայտատուն հայտն ուղարկելուն հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում չի ստանում պատասխան նամակ հայտը ստանալու վերաբերյալ, խնդրում ենք գրել հետևյալ էլ□ հասցեին՝ margarit.grigoryan@yic.am, կամ զանգահարել +37433177555 հեռախոսահամարով:

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Ենթադրամաշնորհային մրցույթի շրջանակում ներկայացված հայտերը կուսումնասիրվեն և կգնահատվեն ծրագրի ընտրական հանձնաժողովի կողմից՝ մրցույթի վերջնաժամկետին հաջորդող երկշաբաթյա ժամկետում: Ստորև կարող եք ծանոթանալ հայտերի գնահատման չափանիշների աղյուսակին:

1. Գործառնական կարողություններ (առավելագույնը՝ 20 միավոր)
- Հայտատուի ոլորտային փորձառությունը և նախագծերի իրականացման կարողությունը: (առավելագույնը՝ 10 միավոր) - Նախագծի իրականացման համար անհրաժեշտ բավարար մարդկային ռեսուրսները: (առավելագույնը՝ 5 միավոր) - Հայտատուի ոլորտային ներգրավվածությունը և առաջադրած խնդիրների իրազեկությունը: (առավելագույնը՝ 5 միավոր)
2. Համապատասխանություն (առավելագույնը՝ 30 միավոր)
- Որքանո՞վ է նախագծի գաղափարը համապատասխանում մրցույթի նպատակներին. արդյո՞ք նախագծի ակնկալվող արդյունքները համահունչ են դիմորդների համար ուղեցույցում սահմանված նպատակներին: (առավելագույնը՝ 5 միավոր) - Որքանո՞վ է ծրագիրը համապատասխանում երիտասարդների կարիքներին: (առավելագույնը՝ 10 միավոր) - Որքանո՞վ են չափելի նախագծի նպատակները/արդյունքները (առավելագույնը՝ 10 միավոր) - Արդյո՞ք նախագիծը պարունակում է որոշակի հավելյալ արժեքի տարրեր երիտասարդների զորեղացման համար (առավելագույնը՝ 5 միավոր)
3. Դիզայն և իրականացում (առավելագույնը՝ 15 միավոր)
- Որքանով է հստակ արտահայտված գործողություն-արդյունք-նպատակ կապը (առավելագույնը՝ 10 միավոր) - ծրագրի իրագործելիությունը: (առավելագույնը՝ 5 միավոր)
4. Կայունություն (առավելագույնը՝ 15 միավոր)

- Արդյո՞ք նախագիծը կունենա շարունակական բնույթ ֆինանսավորման ավարտից հետո: (առավելագույնը՝ 10 միավոր) - Արդյո՞ք նախագծի արդյունքները ավելի լայն տարածում կունենան դրական ազդեցություն ստեղծելու համար: (առավելագույնը՝ 5 միավոր)
5. Բյուջեն և ծախսարդյունավետությունը (առավելագույնը՝ 20 միավոր) - Գործողությունները պատշաճ կերպով արտացոլվա՞ծ են բյուջեում: (առավելագույնը՝ 10 միավոր) - Արդյո՞ք նախագիծն ունի ողջամիտ գնով արդյունք տալու կարողություն: (առավելագույնը՝ 10 միավոր)

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ընդհանուր դրույթներ.

- Ենթադրամաշնորհ ստանալուց հետո ենթադրամաշնորհառուն ստանձնում է նախագծի ամբողջական պատասխանատվությունը, մասնավորապես՝ նախագծի և ֆինանսների կառավարումը:
- Ծրագրի տեսանելիությունն ապահովելու համար, ենթադրամաշնորհառուները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը, նախապես համաձայնեցնելով «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ-ի (Հիմնադրամի) և Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն (ԵՆԿ) ՀԿ-ի հետ:
- Նախքան նախագծի սկզբնական պլանում որևէ փոփոխություն կատարելը, ենթադրամաշնորհառուն պետք է խորհրդակցի և հաստատում ստանա ԵՆԿ և Հիմնադրամի կողմից:
- Ենթադրամաշնորհառուն պետք է երաշխավորի նախագծի իրականացման ընթացքում առաջացած ֆինանսական միջոցների պակասի դեպքում վերջինիս ավարտին հասցնելը:
- Եթե ենթադրամաշնորհառուն նախագծի իրականացման ընթացքում չի կատարում ենթադրամաշնորհի նախնական պլանի համաձայն ստանձնած

պարտավորությունները, ԵՆԿ ՀԿ-ն իրավունք ունի պահանջելու ենթադրամաշնորհի գումարի մի մասի կամ ամբողջ չափի փոխհատուցում:

- Ենթադրամաշնորհի մեկ հայտարարության ներքո հայտատուն կարող է ներկայացնել ֆինանսավորման համար նախագիծ միայն մեկ անգամ:
- Ենթադրամաշնորհային նախագծերի բովանդակային և մշտադիտարկման ուղղություններով ենթադրամաշնորհառու կազմակերպությունների և անհատ փորձագետի հետ աշխատելու է նաև «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ-ն՝ Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն (ԵՆԿ) ՀԿ-ի հետ միասին:

Վճարում և փոխհատուցում.

- Ծրագրի շրջանակներում իրականացվող գնումների և ծառայությունների դիմաց հաշվարկվող ԱԱՀ-ն չի համարվում ընդունելի ծախս և ենթադրամաշնորհառուի կողմից չի կարող ներկայացվել փոխհատուցման:
- Մինչ ենթադրամաշնորհը հաշվին փոխանցելը, ենթադրամաշնորհառուն Ստացողի անունով պետք է բացի նոր բանկային հաշիվ/ենթահաշիվ (ՀՀ դրամով), որը նախատեսված կլինի ծրագրի համար:
- Նախագծի ավարտից հետո ենթադրամաշնորհառուն պետք է վերադարձնի ենթադրամաշնորհի մնացորդը ԵՆԿ ՀԿ-ին՝ համաձայն պայմանագրում նշված կետի՝ ծրագրի պատմողական և ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվետվողականություն.

- Ենթադրամաշնորհառուն պետք է հաշվետվություններ (պատմողական և ֆինանսական) ներկայացնի նախագծի իրականացման վերաբերյալ ենթադրամաշնորհային պայմանագրում նշված հաճախականությամբ՝ համաձայն ԵՆԿ ՀԿ-ի կողմից տրամադրվող ձևանմուշների: Նախագիծը ավարտուն կհամարվի, երբ պայմանագրով նախատեսված բոլոր արդյունքները ներկայացված կլինեն:

- Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն (ԵՆԿ) ՀԿ-ի և «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ-ի ներկայացուցիչները կարող են պարբերական այցելություններ իրականացնել ֆինանսավորում ստացած նախագծի կազմակերպությանը և նախագծի իրականացման վայրեր՝ ուսումնասիրելով տվյալ պահին ունեցած առաջընթացի վերաբերյալ առկա փաստարկները, իսկ նախագծի պատասխանատու կողմը պետք է նախապես տեղեկացնի ծրագրում նախատեսվող և իրականացվող միջոցառումների մասին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Ֆինանսական բաշխվածություն.Ենթադրամաշնորհի գումարը կարող է ծախսվել միայն նախագծի գործողություններին վերաբերող նպատակների համար: Ստորև ներկայացված են ընդունելի և բացառվող ուղղությունները բյուջեն ծախսելու համար:

<u>Ընդունելի ծախսեր</u>

- Նախագծի գործողությունների իրականացման համար նախատեսված ադմինիստրատիվ ծախսերը (ներառյալ՝ համակարգում, հաշվապահություն և այլ վարչական ծախսեր) և սարքավորումների ձեռքբերման ծախսերը միասին չեն կարող գերազանցել պայմանագրի ընդհանուր գումարի 40%-ը: Ընդ որում, սարքավորումների ձեռքբերման ծախսերը չեն կարող գերազանցել պայմանագրի ընդհանուր գումարի 20%-ը:
- Նախագծի գործողությունների իրականացման համար պատասխանատու փորձագետների հոնորարի վճարներ,
- Նախագծի գործողությունների իրականացման համար նախատեսված ուղիղ ծախսեր (հյուրասիրություն, միջոցառման տարածքի վճար, տրանսպորտ, նախագծին վերաբերելի բանկային վճարներ և այլն):

<u>Բացառվող ծախսեր</u>

- Դիմող ՔՀԿ-ներում գրանցված հիմնական աշխատակիցները չեն կարող լրավճար ստանալ մատուցված ծառայությունների դիմաց,
- Գրասենյակի վարձակալություն,
- Կոմունալ վճարումներ,
- Պարտքեր և պարտքի սպասարկման վճարներ (տոկոսներ),
- Կորուստների կամ հնարավոր գումարային պարտավորությունները,
- Մեկ այլ դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորում ստացած կազմակերպության կամ անհատի գումարի տրամադրում տվյալ ծրագրի ծախսերն իրականացնելու համար,
- Ավելացված արժեքի հարկ,
- Վարկեր երրորդ անձի,
- Դատավարության տույժեր և ծախսեր:

Ֆինանսական փոխանցումներն իրականացվելու են ըստ ենթադրամաշնորհառուի հետ կնքված Պայմանագրում նշված բաշխման սկզբունքի: